4. ՄԱՐԴԱԿԵՐՊ ԶՈՒԿԸ

Ժամանակոց մեկ հերմ ու տղեմ կային։ Էսոնք թոռճի էին։ Ամեն օր կէրթային ծովի քյանարը, թոռը կը քցեին ջուրը, ձուկ կը բռնեին, բերեին քաղաք, որը կուտեին, որն էլ կը ծախեին, իրանց ձեռքը քանիմ գռոշ կանցներ, տան պակասությունը կը հոգային ու էսպեսով էլ կապրեին։

Մեկ օրմ էլ, էս հերն ու տղեն էլի թոռն առան ելան գնացին ձուկ բռնելու։ Գնացին հասան ծովի քյանարը թե չէ՝ թոռը քցեց ջուրը, քիչմ կեցավ, ջրեն հանեց, տեսավ որ էս անդամին էնպես մեկ աննման ձուկմ է ընկել թոռի մեջն, որ չուտես չը խմես, էդոը սեյր էնես։ Վրեն օսկու պես կը փայլեր։

Տղեն հոր ձեռքեն ձուկը խլեց, աշեց, աշեց.— Ափսոս է որ,— ըսավ,— էս ձուկը մարդիքն ուտեն։— Ու քցեց էլի ջրի մեջը։

Հերը հերսոտավ տղի վրեն, էլի թոռը քցեց ծովը, քիչմ անցավ՝ դուս հանեց, տեսավ որ էլի էն ձուկն է մեջը։ Թոռճու քեֆը շատ էկավ, էլի ձուկն առավ ձեռն ու սեյր էրավ խելիմ։ Էս անդամին տղեն էլի խլեց հոր ձեռքեն ձուկը.

— Անաստվածություն է,— ըսավ,— էսպես ձուկն ուտել։— Ու էլի քցեց ծովը։

Հերը էս անգամիս շատ հերսոտավ տղի վրեն, էլի թոռը քցեց ջուրը.

— Ես էդ ձուկը մախսուս պտի բռնեմ,— ըսավ,— էդ ուրիշ թտ-

վուր ձուկ էր,— ասավ,— թագավորին որ փեշքաշ տանիմ, ընձի էն քիչը տասը օսկի կուտա։

Քիչմ կեցավ, թոռը դուռ հանեց ջրեն, աշեց տեսավ, որ էլի էն ձուկն է մեջը.— էս ձուկը մեր ղսմաթն է,— ասավ թոռճին,— էս իրեք անգամ էղավ, որ ընկավ մեր թոռի մեջը։

Տղեն էս անդամին էլ մհանա սեյր էնել էրավ, մոտեցավ աշեց ու հոր ձեռքեն խլելով ձուկը, քցեց ծովը.— էս ձուկը ուտելու ձուկ չէ,— ասավ,— ես էս ձուկը պտի աղատեմ։

Հերը հերսոտավ, տղին ծեծեց.— Կորի գնա',— ասավ,— փուչ կենդանի, դու իմ աշխատանքս քցեցիր շուրը, քեզի պես բեդովլաթ տղեն ընձի պետքը չէ, կորի գնա քովես, որտեղ գուզես էնտեղ կեցի։

Տղեն հեչ ձեն չը հանեց, գլուխը կախեց, խեղճ, խեղճ հոր քովեն հեռացավ։ Էս կողմ աշեց, էն կողմ աշեց ու քելեց դեպի դեմն էրեցող մեշեն։ Մեշեն որ հասավ, էստեղ մեկ ուրիշ տղիմ դեմ դիպավ։

— Բարև',— ասավ թոռճու տղին էս մարդը,— էդ ո՞ր կէրթաս։

— Հե'չ,— ասավ տղեն,— ըշտը ընկեր եմ ճամբա կէրթամ։ Հերս ընձի վռնտեց քովեն, կէրթամ ուրիշ երկիր ընձի համար գործ գտնելու։

— Ես էլ քեզի պես եմ, ընձի էլ հերս տնեն վռնտեց, արի' ընկեր դառնանք, մեկտեղ էրթանք, տեսնենք աստված ի՞նչ կաչողե։

Թոռճու տղեն ու էս մեկել տղեն դարձան ընկեր ու ընկան ճամբա։ Գնացին, գնացին, շատ ու քիչն աստված գիտե, տեյմորի հասան մեկ քաղաք։ Տղեն գնաց մեկ ղասապի քով աշկերտ մտավ, թոռճու տղեն էլ բաղնիքի մեջը ղուլլուղճի[1] էղավ։

Էս քաղաքի մեջը էնպես սովորություն կար, որ ղասապները օրական ինչքան որ մալ մորթեին, մալերու սրտերը, թոքերը, պլոճիկները բիրագի պտի ղրկեին թագավորին փեշքաշ։

Առավոտուն ուստեն ելավ մալերը մորթեց։ Սիրտ, թոք-մոք բիրադի ժողվեց լցեց մեկ սինում մեջ ու տվեց աշկերտին, որ տանի թագավորին։

Տղեն սինին առավ գնաց դպա թագավորի պալատը։ Նես մտավ, էս կողմ աշեց, էն կողմ աշեց, զարմացավ մնաց, պատերը բիրադի մարդու գլուխներով էին շարած, առիքն էլ ջամդակով էին ծածկել։

— Ալա',— ասավ տղեն թագավորի Ալին,— էս ի՞նչ բան է,

---

[1] Ծառայող (Ս. Բ.)։

ես էս բոյրս քաշել էի, հըլա էսպես բան չէի տեսել, տունն էլ մարդու գլխով ու ջամդաքով շինվի՞, մակյար ձեր երկրի ադաթն էսպես է,— ըսավ։

— Էսոր պատմությունը էրկան է,— ըսավ Լալեն,— դու սինին տար թագավորի առաջը դի՛ր, արի՛ քեզի բիրադի կըսեմ։

Տղեն նես մտավ, օխտն անգամ գլուխ տվեց, սինին դրեց թագավորի առաջը ու ետ էկավ էլի Լալի քովը։

— Է, հիմի պատմե,— ըսավ,— Լալա՛։

— Էս մեր թագավորը,— ըսավ Լալեն,— մեկ աղջիկմ ունի, աղջիկ խո՛ չէ, աստրծու կրակ է հոր ջանին։ Թագավորը ինչ կէնե չի էնե, չի՛ պսակվի, հե՛չ տղի չի հավնի, հեչ մարդու հետ էլ չի խոսա։ Էնպես երդում է կերել, որ, թե որ էնպես մեկ տղեմ էղավ, որ էկավ կրցավ իրան խոսեցնել տա, ղաթի լավ՝ էնոր կառնի հետը կը պսակվի, թե որ չէ՝ աշխարհք չը պտի մտնի։

Էս քանի տարիս արարոց աշխարհք էլ տղա չը մնաց, ի՞նչ տղեք... բիրադի թագավորի, իշխանի ու մեծամեծի տղե՞ք, էկան էս աղջկա քովը, ինչքան աշխատան, ինչքան հնարքներ բանցրին, չը կրցան էդ անիծածին խոսացնել, խոսքմ չը կրցան բերնեն հանել։

Աղջիկն էլ, էս տղեքին, որ չէին կրնա իրան խոսեցնի, հերսը գելներ ու գլուխները զարկել կուտար։ Գլուխները մեկ տեղ, ջամդակներն էլ ուրիշ տեղ թոփ էնել կուտար։ Գլուխ ու ջամդակ շատ օր թոփ էղավ, արթղ էս պալատը շինեց։

Հիմի ինքն էլ, էս սհաթիս էլի առաջվա պես ո՛չ մարդու հետ կը խոսա, ո՛չ էլ կը պսակվի, չումքի տեյմորի էսօր հեչ մեկ տղեմ չէղավ, որ էդոր կրնանար խոսացնել։ Հիմի բիրադնի աչքն էլ վախեցավ հեչ մեկ տղեմ էլ սիրտ չի էնե, որ գա փորձե, բալքի թե կրնանա խոսացնել էդ անիծածին։ Ի՞նչ էնեն, բիրադի էլ կը վախենան, թե գլուխները զարկե։

— Ես էդ աղջկան կրնամ խոսեցնե, Լալա՛,— ըսավ տղեն։

— Ա՜յ որդի, քու բանդ չէ՛,— ըսավ Լալեն,— խեղճ տղա ես, գլուխդ կը զարկե, գնա՛ բանիդ։

— Չէ՛, Լալա, աստված վկա, ես էդ աղջկան կրնամ խոսացնե,— ըսավ տղեն,— քու ի՞նչ բանդ է, չը կրցա, իմ գլուխս պտի զարկե։ Դու գնա՛ թագավորին իմաց տուր՝ մեկ ընձի նես թողնեն էդ աղջկա քովը, տեսնեմ հըլը ընչի՞ չը պտի խոսա էդ աղջիկը։

— Ա՜յ որդի՜,— ըսավ նորից Լալեն,— արի՛ կէղնի դու վազն արի էդ անիծածից, ես գիտեմ, որ գլուխդ կուտե։ Տե՛ս, դու գիտես,

ես թագավորին իմաց տալը՝ կէրթամ իմաց կուտամ, քեզի էլ աղչկա քովը կը թողնեն, հըմը վերջը դու կը փոշմնիս, ա՛յ։

— Վնաս չունի, դու գնա՛ թագավորին իմաց տո՛ւր,— ըսավ տղեն,— էսքան տղեքի գլուխը կտրել է տվել՝ հիմի թող իմ գլուխս էլ կտրե, իմ արունս խո էնոնց արունեն կարմիր չէ։

Լալեն նես գնաց թաղավորին ըսավ, պատմեց, թե տղեն ինչըղ տղա է։

Թագավորը կանչել տվեց տղին իրան քովը, խոսացրեց, տեսավ։

— Տղա,— ըսավ թագավորը,— տե՛ս, ես ահան առաջուց կըսեմ, որ մեղքես պրծնիմ, ետև դու գիտես։ Իմ աղչկաս խոսացնելը շատ դժար է։ Էսքան վախտ ինչքան տղեք էկան, քեղնեն շատ խելոք ու ճարտար տղեք, հեչ մեկը չկրցան խոսացնել, բիրադնի գլուխները կտրել տվեց։ Ահան էս սաղ պալատն էլ էնոնց գլխներովն ու ջամդակներով է շինած։ Հիմի թե դու էնքան մարիֆաթ ունիս, որ գիտես, թե կրնաս խոսացնել, գնա՛ աղչկաս քովը, թե չէ՛ մի էրթա, տե՛ս, քու ղլուխդ էլ զարկել կուտա։

— Թագավորն ապրած կենա,— ըսավ տղեն,— ես հաստատ գիտեմ, որ աղչկադ պտի կրնանամ խոսացնել, թե որ չը կրցա, իմ գլուխս էլ թո՛ղ զարկել տա, ի՞նչ էնենք, ինքն ու իրան աստվածը։

— Լա՛վ, մեղքը քու վիզդ, դու դիտես,— ըսավ թագավորը։

Ետև թագավորը կանչել տվեց իրան քովը էդ քաղքի Դատավորին։

— Էս տղի հետ մեկտեղ կէրթաք աղչկաս քովը,— ըսավ,— դու էս բանի մեջը վկա պտի էղնիս, թե որ էդ տղեն էնտեղ քու առաջդ կրցավ աղչկաս խոսացնել, քու ականջովդ իմացար իմ աղչկանս ըսած խոսքերը, ընձի էն սհաթին մուժտա[1] բե՛ր, որ ես աղչկաս տամ էդ տղին, թե չէ, չը կրցավ խոսեցնի, զաթի գլուխը պտի զարկվի։

Դատավորը աղին հետն առավ գնաց թագավորի աղչկա օտեն։ Նես մտան թե չէ, տղեն բարև տվեց.

— Բարև քեզ թագավորի աղչիկ։

Աղչիկը հեչ տերը չէղավ։

— Բարև ձեզի,— ըսավ,— տո՛ւն, պա՛տեր, քարե՛ր, սնե՛ր...

Էլի հեչ ձեն հանող չէղավ։

Աղախնի մեկը բերեց էրկու հատ աթոռ դրեց, նստան ինքն ու Դատավորը։

Քիչմ որ մնացին.— Պարոն Դատավոր,—ըսավ տղեն,—ես քեզի մեկ բանմ պտի պատմեմ, էսոր վճիռը դու տո՛ւր, դու սաղ քաղա-

[1] Ավետիս (Ս. Բ.)։

քիմ դատավոր ես, քեզի պես խելոք մարդն էլ որ էսիկ չը հասկնա, էլ ո՞վ պտի հասկնա։

— Ըսա՛ տեսնեմ ի՞նչ է,— ըսավ Դատավորը։

Իրանք մարդ,— ըսավ տղեն,— ղարիպությունեն ետ դուքային իրանց տները։ Էսոնցից մեկը շատ գլխավոր դյուրկյար էր, մեկը լավ թարզի էր, մեկել ընկերն էլ՝ հեչ զանիաթ բան չէր գիտի, էնպես խեղճ մարդ էր։ Ճամբեն էսոնք մեկ օրմ չը կրցան լուսով տեղ հասնի, շենլիկ հասնի։ Մութը կոխեց ու իրանք մնացին մեշի մեջը։ Խորհուրդ էրին, որ գիշերը մնան էդ մեշի մեշը, առավոտուն ելնին, էլի ընկնին իրանց ճամբեն։

Իշած տեղերը շատ ահոտ էր, խորհուրդ էրին, որ իրանցից ամեն մեկը փոխեփոխ ղարաղուլ քաշե, էրկուսը քնին։ Կրակ էրին իրանց համար ու ճամբու պաշարեն քիչմ առաջ բերին կերան, ետև թարզին ու էն խեղճ մարդը ընկան քնան։ Մնաց զարթուն դյուրկյարը, որ ղարաղուլ քաշե։ Դյուրկյարն որ մենակ մնաց, ինքն իրան մտածեց.— Ջա՛նըմ,— ըսավ,— ես էս էրկու սհաթը մենակ, պարապ ի՞նչպես ղարաղուլ քաշեմ։ Կացին ունիմ, ուրագ ունիմ, սղոց ունիմ, բիրադի հաճաթներս քովս է, ես գելնիմ մեկ բանմ կը շինեմ, մինչև իմ քնելուս սրեն գա։ Հազր տեղն էլ մեշա, փետը լիքը, պարապ ընչի՞ մնամ։

Ելավ վեր դյուրկյարը, կացինն առավ, մեշի մեջն ընկավ, մեկ լավ փետմ ջոկեց, կտրեց, էդ փետի վրա էրկու իրեք սհաթ աշխատավ ու փետե մարդմ շինեց, կայնեցուց։ Ետև թարզուն ձեն տվեց, որ ղարաղուլ քաշե ու ինքն ընկավ քնավ։

Թարզին ելավ, աչքերը տրորեց, օրոճկտաց, աշեց որ՝ ահան մեկ փետե մարդմ.

— Այ, էս մեր դյուրկյար ախպոր բանն է,— ըսավ,— մեկ շորերն ու հոգին է պակաս մնացել, որ իսկ մարդ դառնա։ Ես ընչի՞ պարապ էրկու իրեք սհաթ ղարաղուլ քաշեմ։ Հազր ասեղ, թել, կտոր, ամեն բանն ունիմ, ես էլ մեկ ձեռք շոր կը կարեմ, հագցնեմ էս փետե մարդուն, մինչև քնելուս սրեն գա,— ըսավ։

Տոպրակը բացեց թարգին, մկրատ, կտոր, ասեղ, թել բիրադի դուս հանեց, չափ ու ձև էրավ, կտրեց ու տեյմորի քնելու սրեն էկավ, մեկ ձեռք շորը կարեց պրծավ, հագցրեց էս փետե մարդուն։ Ային օյինը էլի ժողվեց լցեց տոպրակը, մեկել ընկերին ձեն տվեց, որ ելնի ղարաղուլ քաշե ու ինքն ընկավ քնավ։

Էս խեղճ մարդն ելավ ղարաղուլ քաշելու, աշեց տեսավ, որ

մեկ ուրիշ մարդմ կայներ է իրանց քնած տեղի քովը, համա հեշ ժաժ չի դա տեղեն։

Վախվխելով քիչմ մոտեցավ, լավ աշեց, տեսավ, որ իսկ մարդ չէ, փետե շինած է։ էն սհաթին հասկցավ, որ իրան ընկերներու բանն է։

Դյուրկյար ընկերս,— ըսավ ինքն իրան,— էս մարդը փետից շինել է, թարզի ընկերս էլ շորերն է կարել հագցրել, ես էլ աստված կաղաչեմ, որ էս փետե մարդուն հոգի տա, իսկ մեղի պես մարդ դառնա։

Էս խեղճ մարդը չոքավ աղոթք էրավ, արտսունք թափեց, մեկ էրկու սհաթ լալով, պաղատելով աղաչեց աստծուն, որ հոգի տա էդ փետե մարդուն։

Աստված էլ անտես չէրավ էդ մարդու աղաչանքը, հոգի տվավ փետե մարդուն ու իսկ մեղի պես մարդ դարձուց։

Ետև էս իրեք ընկերը, առավոտուն էս թաղա շինած մարդու համար իրար հետ կուվան։ Ամենքն էլ կըսեին թե՝ իմ շինածս է էդ մարդը ու իրարու ձեռքե կը քաշքշեին։

— Էս բանի վճիռը հիմի դու տուր պարոն Դատավոր,— ըսավ տղեն,— էդ մարդը հիմի ո՞ր մեկի շինածը պտի հաշվել՝ դյուրկյարի՞, թարզո՞ւ, թե մեկել ընկերի։

— Իմ խելքովս,— ըսավ Դատավորը,— դյուրկյարի շինածն է, չումքի դյուրկյարն օր չը մտածեր, փետե մարդ չը շիներ, ո՛չ թարզին էնոր շոր կը կարեր, կը հագցներ, ո՛չ էլ էն մեկել ընկերի մըտքից կանցներ, որ աստծուն աղաչեր, փետե մարդուն հոգի տար։ Ես էդ մարդը դյուրկյարին կը հասցնեմ, պատճառը դյուրկյարն է էղել։

— Չէ, պարոն Դատավո՛ր, դու սխալ ես,— ըսավ տղեն,— իրավունքով թարզուն պտի հասնի էն շինած մարդը, չումքի թարզին որ շոր չը կարեր, հագցներ փետե շինած մարդուն, էն մեկել ղարաղուլ քաշող ընկերի հեշ մտքիցն էլ չէր անցնի թե, աղոթք էներ, աստված էն փետին հոգի տար։

— Չէ,— ըսավ Դատավորը,— թարզու շոր կարելը հեշ, դյուրկյարն օր առաջուց չը շիներ փետե մարդը, թարզին մտքից ե՞րբ կանցներ, որ շոր կարեր, հագցներ։ Պատճառն իսկ դյուրկյարն է էղել, դյուրկյարին կը հասնի մարդը, թարզին էդտեղ մարիֆաթ չունի։

— Համա՜ դատողություն կուտաք հա՜...,— բարկությունեն մեջ մտավ աղջիկը,— քեզի էլ, յանի ո՛չ բարով քաղքի դատավոր ես,

բան պատմեցին, որ վճիռ տաս, դու էլ էդ էր, որ տվիր։ Էդ խելքո՞վ ես էղել քաղքի դատավոր։ Լա՜վ, հըլա ըսենք դյուրկյարը փետից շինեց փետե մարդը, թարզին էլ ելավ էդ փետե մարդը տեսավ, մեկ ձեռք շոր կարեց հագցրեց, էն մեկել ընկերն որ չելներ աստծուն աղաչեր, որ էդ փետե մարդուն հոգի տա, աստված էլ հոգի չը տա՜ր, դյուրկյարի շինած փետե մարդը ընչի՞ պետք գուքար, էլի փետ չէր ի՞նչ էր։

Դատավորն էլ չը մնաց, էն սհաթին առավ տղին ու գնաց թագավորի քովը։

— Թագավորն ապրած կենա,— ըսավ,— աչքդ լուս, աղջիկդ խոսաց։

Թագավորը հեչ չը հավատաց Դատավորի խոսքին։ Թագավորի համար իրան աղջկա խոսալը մեկ անդամ անկարելի բան էր թվացել.

— Իմ աղջիկս խոսացողը չէ՛,— ըսավ թագավորը,— ես գիտեմ, տղեն քեզի կաշառք է տվել, որ գաս ընձի էդպես ըսես։

Դատավորը երդում-պատառ էղավ, մեկ մեկ ըսավ տղի ու աղջըկա խոսած խոսքերը, էլի չէղավ, թագավորը էլի չը հավատաց.

— Էդ էդնելու բան չէ,— ըսավ։

Ետև թագավորը դարձավ տղին.— Ա՛յ տղա,— ըսավ,— մեկ անգամ էլ քեզի իրավունք կուտամ, որ էլի էս Դատավորի հետ երթաս աղջկաս քովը, փորձես, բալքի խոսացնել տաս։ Էս անդամին ուրիշ իրեք մարդ էլ կը ղրկեմ էնտեղ, որ գան դռան ետևեն խոսքերին անկաջ դնեն։ Թե որ Դատավորի ըսածի պես հաստատ աղջըկաս խոսացնել ես տվել, ղաթի էս անգամին էլ կը խոսա, թե որ հիմի չը խոսաց ու էն իրեք մարդիքը ընձի մուժտա չը բերին, իմացի՛ր, որ քու գլուխդ էլ ու Դատավորի գլուխն էլ կը զարկեմ։

Դատավորն էլի առավ տղին գնաց աղջկա քովը, մտավ նես։ Էն իրեք մարդն էլ օտի դռան տակը պահ մտան, որ անկաջ դնեն։

Տղեն էլի բարև տվեց.

— Բարև քեզ թագավորի աղջիկ,— ըսավ։

Բայց աղջիկը հեչ ձեն չը հանեց։

— Բարև,— ըսավ,— ձեզի տո՛ւն, պատե՛ր, քարե՛ր, սնե՛ր։— Ու էլի հեչ ձեն ձուկ չելավ։

Աղախնի մեկը էլի բերեց էրկու հատ աթոռ դրեց, գնաց։

Դատավորն ու տղեն նստան։ Քիչմ կեցան.— Պարոն Դատավո՛ր,— ըսավ տղեն,— էս օր էլ մեկ բանմ պտի պատմեմ քեզի, տեսնեմ կրնա՞ս վճիռ տա թե չէ՛։

— Ըսա՛ տեսնիմ, որդի՛,— ըսավ Դատավորը։

— Ժամանակոց իրեք հատ ախպեր կէղնին,—սկսեց տղեն,—էս իրեք ախպերն էլ մեկ աղչկա վրա աչք կունենան։ Մենծ ախպերը գուզե, որ աղչկան ինքն առնի, օրթանչիլը գուզե՝ ինքն առնի, պզտի ախպերն էլ գուզե, որ էնոնք չառնին, իրան մնա աղչիկը։ Էսոնց խոսքերը մեկ չի դա, զարկեն կը կովին։ Շատ որ կը կովին, մենծ ախպերը դառնա կըսե թե.

— Ախպրտիք ուրիշի աղչկա համար մենք ընչի՞ իրար գլուխ կը ջարդենք, էսպես չի էղնի, արիք մեկ բանմ էնենք։ Մենք որ իրեքս էլ էդ աղչկանեն անցնողը չենք,— կըսե,— արեք բաժնվինք ու ամեն մեկս էրթանք մեկ կողմ մարիֆաթ սորվելու, ետև գանք մեկ տեղ թոփ էղնինք ու էրթանք աղչկա քովը։ Որ մեկիս սորված մարիֆաթին որ հավնավ աղչիկը, թո՛ղ էնիկ առնի։

— Շատ լավ,— ըսին էրկու ախպերը,— էրթանք։

Ճամբա ընկան էս իրեք ախպերն ու գնացին։ Գնացին հասան էնպես տեղըմ, որ ճամբեն իրեք տեղ կը բաժնվիր։

— Կայնեք,— ըսավ էստեղ մենծ ախպերը,— արեք էստեղ բաժնվինք ու ամենս մեկ կողմ էրթանք։ Հըմը առաջուց խոսք տանք իրարու, որ ետ դառնալուս էլի գանք էստեղ թոփ էղնինք իրեքս էլ, ետև էրթանք աղչկա քովը։

Ախպրտանքը խոսք տվին իրարու, ու ամեն մեկը ճամբեն բըռնեց, գնաց։

Մենծ ախպերը գնաց ելավ մեկ քաղաքըմ, հեքիմըմ գտավ, քովը աշկերտ մտավ։ Միջնեկ ախպերն էլ հասավ մեկ քաղաքըմ, ըռսմ քցողի քով աշկերտ մտավ։ Մնաց պզտի ախպերը։

Պզտի ախպերն էլ մեշտեղի ճամբեն բռնեց ու գնաց։ Շատ գնաց քիչ գնաց, շատ ու քիչն աստված գիտե, գնաց հասավ մեկ մեշեմ։ Տեսավ որ մեշի մեջ հեռանց մեկ կրակմ կը փլփլա.— Ես, ըսավ,— կերթամ էդ կրակի քովը, տեսնեմ հըլա էդ ի՞նչ կրակ է։

Գնաց հասավ կրակի քովը, տեսավ որ, ի՞նչ, իրեք աժդահա դև մեշի մեջը կրակ են վառել, քառսուն կանթանի ղազանը դրել են վրեն, որ իրանց համար կերակուր էփեն, իրանք էլ կրակից քիչմ հեռու կայնել են ու կռիվ կէնեն, գյուրզ կը քցեն իրարու։

Դևերն որ էս տղին տեսան.— Ահան,— ըսին,— հողածին էկավ, կեցե՛ք ախպեր, էլ չը կովինք, էս հողածինը մեր դավին կը վերջացնե։

— Հողածի՛ն,— դարձան տղին ըսին դևերը,— առաջ արի՛, մի վախենա, քեզի չենք դիպնի։ Արի՛ մեր դավին վերջացրու։

Տղեն առաջ էկավ։

— Ըսեք տեսնիմ, ի՞նչ է ձեր դավին, դև ախպրտա՛նք,— ըսավ։

— Մենք իրեքս էլ հալալ ախպեր ենք,— ըսին դևերը,— իրեք բան ունինք կիսելու՝ մեկ հատ քոլոզ, մեկ զամչի, մեկ հատ էլ խալի։ Էսոնք ամենն էլ մեկ մեկ մարիֆաթ ունին։ Մարդ որ նստի խալու վրա, քոլոզը դնե գլուխը, զամչին էլ առնի ձեռն ու զարկե խալուն, որտեղ որ ինքն ուզեց՝ կը տանի էնտեղ կը հասցնե։ Հիմի մեր դավին էսոր վրա է։ Ձենք ուզի ամենս մեկ բան վերցնի, չումքի էդ իրեք բանն էլ որ իրար հետ մեկիմ չընկնի, չի կրնա մարիֆաթը բանցնե։ Հիմի դու կրնա՞ս էս մեր ունեցած իրեք բանը էնպես բաժնե, որ համ իրեք ախպորս էլ փայ հասնի, համ էլ էդ բաներու թըլըսումը[1] խարապ չէղնի։

Տղեն ինքն իրան քիչմ մտածեց, ետև դևերուն ըսավ թե.— Կըրնամ։ Էդ իրեք բանն էլ բերեք էստեղ իմ առաջս ու դուք հեռու քաշվե՛ք, իրարուց հեռու կայնեք, ամենքդ մեկ թարաֆ, ես կը կիսկսեմ։ Ու երբ որ ձեզի կանչեցի, արեք ամենքիդ բաժինը իրան տամ։

Դևերը բերին բաները տվին տղին, ու իրանք քաշվան ամենը մեկ թարաֆ, հեռու կայնան։ Էս տղեն էլ քոլոզը դրեց գլուխը, նըստավ խալու վրեն, զամչին առավ ձեռքը, զարկեց խալուն ու ըսավ.— Խալի, քեզնեն զուգեմ, որ էս սհաթիս ընձի տանիս մենծ ախպորս քովը վար իջեցնես։

Դևերը տեսան, որ տղեն իրանց խափեց, բաներն առավ ու գնաց։

— Ա՛յ հողածին,— ըսին ետևեն,— հազար չէղնի հում կաթնակեր ես, ի՞նչ պտի էղնի,— ու փորփոշման էկան նստան իրանց տեղը։

Խալին էլ տարավ տղին իրան մենծ ախպոր քովը վար իջեցուց։

Բարև ախպեր,— ըսավ էս տղեն մենծ ախպորը,— հեչ բանմ սորվե՞լ ես, թե չէ։

— Լավ հեքիմություն եմ սորվել,— ըսավ մենծ ախպերը։

— Օր էդպես է, դե քելե էրթա՛նք.— ըսավ պզտի ախպերը,— նստի էս խալու վրեն, էրթանք մեր միջնեկ ախպոր քովը, տեսնենք հըլը էնիկ ի՞նչ է սորվել։

Էրկսով նստան խալու վրեն։ Պզտիկը էլի զամչով զարկեց.

— Խալի,— ըսավ,— էս սհաթիս քեզնեն գուզեմ, որ տանիս մեզի մեր միջնեկ ախպոր քովը։

---

[1] Դյութականություն (Ս. Բ.)։

Խալին տարավ էն սհաթին միջնեկ ախպոր քովը, էրկուսին էլ վար իջեցուց։

Բարև տվին ախպորն ու ըսին.— Հեչ բան ման սորվե՞լ ես, ախպեր, թե չէ։

— Լավ ըռամ քցել եմ սորվել,— ըսավ միջնեկ ախպերը։

Էս միջնեկ ախպորն էլ առան իրանց հետ ու իրեքով նստան խալու վրեն էկան էլի էն իրեք ճամբու գլուխը վար իջան, որտից որ բաժնվել էին։

Էստեղ պզտի ախպերը դարձավ ըսավ թե.

— Ախպրտի՛ք, հիմի էսպես թավաքյալի աղչկա քովը ի՞նչպես էրթանք,— ըսավ,— բալքի աղչիկը տեյմորի հիմի հեչ սաղ էլ չի մնացել։ Դու հազը լավ ըռամ քցել գիտես,— ըսավ միջնեկ ախպորը,— հըլա ըռամ քցե, աշե, թե աղչիկը սա՞ղ է, մեռած է, ի՞նչ հալի է, մեկ իմանանք, ետև էլի էրթանք։

Միջնեկ ախպերը ըռամ քցեց ու ըսավ.— Ախպրտի՛ք, աղչիկը շատ նեղությյան մեջ է, հիվանդ է, բարակացավ է ընկել, իրեք սհաթ յա ապրի, յա չապրի։

— Լավ, ես աղչկան կը սաղցնեմ, ես էդ ցավի դեղը գիտեմ,— ըսավ մենծ ախպերը,— ես դեղը կը շինեմ, հըմը մեկ սհաթվա մեջ կրնա՞նք հասնի աղչկա քովը, որ ժամանակը չանցնի, սաղցնենք։

— Ես կը հասցնեմ,— ըսավ պզտի ախպերը,— դու թեղ էրա դեղը շինե։

Մենծ ախպերը դեղը շինեց պրծավ թե չէ, պզտի ախպերը ձեռքեն առավ, քոլոզը դրեց գլուխը, նստավ խալու վրեն, ղամչով զարկեց ու ըսավ.

— Խալի՛, քեզնեն գուզեմ, որ էս սհաթիս ընձի ուզածս աղչկա քովը հասցնես։

Էրկու ախպորն էդ տեղ իրան ետևից աշելով թողեց ու ինքը գնաց հասավ աղչկա քովը։ Դեղը տվեց, սաղցրեց, աղչկան էլ առավ ու իրան քեֆին աշեց։

Քանիմ օր ետև էս էրկու ախպերն էկան հասան ու դավի-դառաբա սարքեցին պզտի ախպոր հետ։

Մենծ ախպերը գուզեր, որ ինքն առնի աղչկան, միջնեկ ախպերն էլ գուզեր՝ ինքը խլե պզտի ախպոր ձեռքից աղչիկը, իսկ պզտի ախպերն էլ հեչ մեկին չէր մոտեցնի, թե.— Աղչիկը իսկ ընձի կը հասներ, որ առել եմ։

Էսպես էս իրեք ախպոր գործը մնաց դավու մեջ ու չիստկվավ։

Ետև տղեն դարձավ Դատավորին.— Պարոն Դատավո՛ր,—

ըսավ,— հիմի էս իրեք ախպոր վճիռը դու տո՛ւր, դու մեկ քաղքիմ դատավոր ես, քու խելքդ էլ որ չհասնի էս բանին, էլ ո՞ւմ խելքը պտի հասնի։ էն պզտի ախպոր էրածը մարդկությո՞ւն է, ըռամ քցող, աղջըկա հիվանդությունն իմացողը միջնեկ ախպերը, դեղ շինողը մանչ ախպերը, էն էրկուսը չարչրվին, հիվանդին սաղցընեն, հիմի աղջոկան պզտի ախպե՞րը էրթա առնի, էդ օրե՞նք է, հա՞։ Ըսենք էն էրկու ախպերը էստեղ չեն, խո՞ իրանց փայ աստվածն էստեղ է։

— Շատ մենծ փչություն է պզտի ախպոր էրածը,— ըսավ Դատավորը,— էս սհաթիս էստեղ որ իմ աչքիս առաջը կայնած էղնիր, գլուխը զարկել կուտայի ու աղջկան ձեռքեն կառնեի կուտայի մենծ ախպորը։

— Չէ, պարոն Դատավո՛ր, ընչի՞ էդպես կըսես,— ետև դարձավ ըսավ տղեն,— մենծ ախպերն ի՞նչ էրավ, որ աղջկան տայիր էնոր։ Օղորդ է, էնիկ ցավի դեղը գտավ, շինեց, համա, տեյմոբի միջնեկ ախպերը ըռամ չը քցեր, աղջկա հիվանդ էղնելը չիմանար, էնիկ ո՞ր-տեղից աղջկա հըմար դեղ կը շիներ։ Չէ՛, պարոն Դատավոր, օրենքով ըռամ քցող ախպորը կը հասնի աղջիկը։

— Էլի ի՞նչ երեկվա պես խելքե դուս խակ դատողություններ կուտաք,— համբերությունը հատած, խոսքի մեջ մտավ թագավորի աղջիկը,— տղի ըսածը էլի վնաս չունի, քիչմ խելքի մոտիկ գուքա, բայց քու ըսածդ հեչ բանի պետք չէ, պարոն Դատավո՛ր։ Վա՛յ էս քաղքին, որ դու ես դատավորը։ Ախր հեքիմ ախպերն էդ բանի մեջ ի՞նչ մեկ երևելի հնարմ է բանցրել, յա ըռամ քցող ախպորն ընչի՞ պտի հասնի աղջիկը։ Լա՞վ, հըլա ըսենք թե, միջնեկ ախպերը ըռամ քցեց, իմացավ որ աղջիկը հիվանդ է, մենծ ախպերն աղջկա ցավի դեղն իմացավ, շինեց, տվեց պզտի ախպորը, պզտի ախպերն, որ էն մարիֆաթը չունենար, էն խալին, քոլոզն ու ղամչին, որ ձեռք բերած չըլիներ, էնպես խելքով, էն էլ դևերու ձեռքեն, ու մեկ սհաթվա չը կրնանար դեղը հասցնել աղջկան, աղջիկը ինչպե՞ս պտի աղատվեր իրան ցավեն, աղջիկն օր մեռնիր էն էրկու ախպոր ձեռքը ի՞նչ պտի ընկներ։ Հիմի էլ թո՛ղ իմանան, թե սաքի աղջիկը պզտի ախպոր ձեռը չէ, մեռել է, չկա։

Դռան տակը պահ մտած իրեք մարդիքը, մեկ մեկ իմացան աղջըկա ըսած խոսքերը։ Դատավորն ու տղեն էլ շատ ուրախցան, էլ չը կայնան, էն սհաթին ելան, էն պահ մտած իրեք մարդուն էլ առան ու գնացին թագավորի քովը։

— Թագավորն ապրած կե՛նա,— ըսավ Դատավորը,— աչքդ լուս, աղջիկդ էս անգամին էլ խոսաց։

Թագավորը, էն իրեք մարդուն էլ հարցուց.— Հա՛,— ըսավ,— «ղո՞րդ է Դատավորի ըսածը, աղջիկս խոսա՞ց։

— Հա՛, թագավորն ապրած կենա,— ըսին իրեքն էլ միաբերան,— խոսաց, մենք մեր անկաջովն իմացանք։

Թագավորը շատ ուրախցավ, տեղիցը վեր ելավ, էկավ տղի ճակատը պաքեց.— Կեցցե՞ս,— ըսավ,— արժես, գնա՛ վայելե։ Զաթէ ես տղա չունիմ, համ աղջիկս քեզի, համ թագավորությունս։

Էս խոսքի վրա, տղեն շոքավ թագավորի ոտը պաքեց.

— Թագավորն ապրած կենա,— ըսավ,— ես հեր մեր ունիմ, չեմ կրնա էնոնց թողնի, ընձի իզին տո՛ւր էրթամ իմ երկիրս։ Աղջիկդ էլ, թե որ կուտաս տանիմ, դու գիտես, չես տաս, էն էլ դու գիտես։

— Լա՛վ, որդի, ինչպես դուղես էնպես էրա՛, աղջիկս մեկ անդամ խոսք եմ տվել, որ քեզի տամ, ղաթի ուրիշ մարդու կնիկ չի էլ կրնա՛ էղնի, գու ես խոսացրել, քեզի պտի առնի։ Հիմի դու գիտես, դուռ չեմ էնե, գուղես էստեղ կեցի, գուգես ա՛ռ հետդ տար քու հորդ երկիրը։ Ինչպես գուղես, էնպես էրա։

Ետև թագավորը կանչեց Լալին հրամայեց, որ աղջկա ջհեզի թատարուբր տեսնի, քառասուն դավա հազր էնե, որ աղջկան ու տղին ճամբու դնեն։

Թագավորի վեսեն ուրախ, ուրախ վազեց բաղնիք, գտավ իրան ընկերին՝ թոռճու տղին.

— Դու էդ ի՞նչ հալի հետ ես,— ըսավ,— հազրվի, որ մեկ քանիմ օր ետև ճամբա պտի ընկնինք, էլի էրթանք մեր երկիրը։ Աստված մեզի տվեց ու լավ տվեց։ Էստեղ կենալը էլ մեզի ձեռք չի տա, ախպեր, հազրվի էրթանք։

— Ի՞նչ կա, էդ ի՞նչ էղավ,— հարցուց թոռճու տղեն։

— Ետև դիմանաս, ետև, դու հիմի հազրվի, ճամբու թատարուք տես, ահան քեզի բուռմ էլ օսկի, թե փարա չունիս։ Իրեք օր ետև ես գուքամ, քեզի հետս կառնեմ կէրթանք մեկտեղ։

Իրեք օրը թմմավ թե չէ, աղջկա ջհեզը բարձան քառասուն դավի, տղեն ու թագավորի աղջիկն էլ բազման լավ ձիանների վրա ու առոքփասոք ճամբա ընկան։

Քյարվանն օր հասավ բաղնիքի դռան առաջը.— Թոռճու տղա՛, թուռճու տղա՛,— ճվաց ձիու վրայեն թագավորի փեսեն,— դուս արի էրթանք։

Թոռճու տղեն դուս էլավ բաղնիքեն, իրան շեհ-շալակը մեջքին կապած ու քյարվանի հետ քելեց գնաց՝ բանից բեխաբար։

Գնացին, գնացին, շատ ու քիչն աստված գիտե, տեյմորի հա-

սան ծովի քյանարը—մեշի մեշը, էն տեղը, որտեղ որ թոռնու տղեն հանդիպել էր էս մարդուն, որ հիմի թագավորի փեսա էր դարձել։ Էս տեղն օր հասան, «կայնեք», ըսավ թագավորի փեսեն։ Քյարվանը կայնավ։ Ինքը ձիուց վար իջավ, թագավորի աղջկան էլ ձիուց վար բերեց, բեռներն էլ բիրադի վար թափել տվեց դավեքի վրայից.

— Դե, թոռնու տղա,— ըսավ,— հիմի առաջ արի՛, էս դոլվաթը հալալ ախպոր պես կիսենք իրար հետ, կեսն ընձի, կեսը քեզի։

Թոռնու տղեն զարմացավ.— Ախպեր,— ըսավ,— էդ դոլվաթը դու ես աշխատել, աստված քեզի է տվել էդ դոլվաթը, խո ընձի չի՞ տվել, ես մեջն ինչ ունիմ, որ գամ քեզի հետ կիսեմ։

— Մեկ է,— ըսավ թագավորի փեսեն,— մեկտեղ ընկեր դարձանք, էկանք ընկանք էս ղարիբ երկիրը, չարչրվանք։ Հիմի էնպես հաշվենք՝ թե դու էլ հետս ես աշխատել, ընկեր չե՞նք, մեկ չէ՞, քու ձեռդ որ ընկած էղնիր էս դոլվաթը, դու էլ ընձի հետ կը կիսեիր, ես գիտեմ։

Չեմ-չում, շատ նազ ծախեց էս թոռնու տղեն.

— Ես չեմ ու մեմ չիտեմ,— ըսավ թագավորի փեսեն,— ես հալալ կը կիսեմ, կեսը քեզի զոռովեն կուտամ, տեսնիմ հըլա դու ի՞նչը չը պտի վերցնես։

Էս խոսքեն ետև հրամայեց, էն սհաթին քառսուն բեռն էլ բիրադի քանդեցին, շեհերը դուս հանեցին, բիրադի կիսեց, էրկու հալալ բաժին էրավ։

— Ահա՛ն,— ըսավ,— մեկ բաժինն ընձի, մեկն էլ քեզի, թոռնու տղա։ Է՞,— դարձավ ըսավ,— հիմի մնաց մենակ աղջիկը կիսելու, էդ էլ կիսենք՝ կը պրծնինք, էլ բան չի մնա։

Թագավորի փեսեն թուրը դուս քաշեց ու «դավաճի» ճվաց։ Դավաճոց մեկն առաջ էկավ.

— Էս աղջկա մեկ թևեն բռնե,— ըսավ։ Դավաճին աղջկա թևեն բռնեց։

— Դե, էս մեկել թևեն էլ դու արի՛ բռնե, թոռնու տղա,— ըսավ։

— Ես չե՛մ բռնե,— ըսավ թոռնու տղեն,— խեղճ աղջկան զուր տեղը ընչի՞ կսպանես, ախպեր, մի կիսե, կեսն ընձի պետքը չէ, ինչ լավություն որ էրիր՝ հերիք է։ Աղջիկը բիրադի դու վերցրո՛ւ, թո՛ղ սաղ մնա քեզի, ո՞վ կըսե, որ կիսես։

— Լա՛վ, լա՛վ,— ըսավ թագավորի փեսեն,— պետք չէ, մի բրոնի, զաթի դու էդպես խղճով մարդ ես, ես քեզի վաղուց եմ փորձել։ Դավաճի,— էլի ճվաց,— մեկն ու մեկդ արեք էստեղ։

Դավաճոց մեկն առաջ էկավ։

— Աղչկա մեկել թեևն էլ դու ռոնե,— ըսավ։

Դավաճին թեից բռնեց։ Էս վախտը թոռճու տղեն քիչմ հեռու կայնել էր ու խեղճ-խեղճ կաշեր թաղավորի փեսի էրածներին։

Թագավորի փեսեն թուրը վեր վերցուց, գնաց էկավ ու հասավ աղչկա վրա, թուրը վրա բերեց՝ որ ղարկե։ Աղչիկն էնպես իմացավ, թե տղեն թրով իրան հաստատ էրկու կտոր պտի էնե, շատ վախենալուցն օր օրձկաց ու յո՞ էրավ, մեկ մենծ շահմար օձրմ էն սհաթին էկավ բերնեն վար ընկավ։

— Թոռճու տղա՛,— ըսավ թագավորի փեսեն,— դե հիմի առաջ ուրի ու աչքովդ տես,— ըսավ,— էս օձը լավ կը տեսնի՞ս, քանի որ էդ անիծածր աղչկա փորի մեջը մնար, դուս չը գար, էդ աղչիկն իրան մարդու հետ հեչ չը պտի հնավորեր[1]։ Էսքան վախտ էլ, որ հեչ մեկ տղիմ հետ չէր ուզեցել խոսա, ընձնեն սավայի, էլի էդ օձի պատճառովն էր։ Հիմի օձն օր փորեն դուս էկավ պրծավ, ապրեշումի պես կը կակղնա, ինչպես ուզես քու կամքովդ գելնի, կը նստի։ Էսոնց հեչ մեկն էլ ընձի հարկավոր չէ, ո՛չ դոլվաթը, ո՛չ աղչիկը, էսոնք բիրադի քուկդ են, թոռճու տղա՛։ Էս կիսկսելն էլ որ մեջ քցեցի, էլի աղչկա պատճառովն էր, որ օձեն ազատեցի։ Չէղնի թե քեզի վնասեր։ Դու ընձի ժամանակոց լավություն էրիր, քու լավությանդ տկեն ես պտի դուս դայի։ Ես էն ձուկն եմ, որ հորդ ձեռքեն իրեք անգամ խլեցիր, ազատեցիր։ Ես էնտեղ փորձեցի քու հոգիդ։ Մնաս բարով, աղչիկն էլ քեզի, դոլվաթն էլ քեզի, գնա՛ վայելե։ Ես ինչպես որ ձուկ էի, էլի էնպես ձուկ կը դառնամ, կէրթամ իմ ծովիս մեջը։

Ինչպես որ ըսավ, օղորթ, էնպես էլ ձուկ դարձավ ու չրբալեն գնաց ընկավ ծովի մեջը։

Թոռճու տղեն էլ շեհերը բիրադի թոփ էրավ, լցեց բեռներու մեջը, բարձավ էլի դավեքի վրեն ու աղչկա հետ մեկտեղ ընկան ճամբա։ Քանիմ օրեն ետև հասան իրան հոր տունը։

Հերը տղին որ տեսավ, ուրախությունեն խելքը թռցուց։

Հաթահուութով ղրալթի հարսնիքմ էրավ, քառասուն օր, քառասուն գիշեր ուրախություն էրին, տղին պսակեցին։ Սաղ քաղաքը թամաշա կայնավ էս հարսնիքին։ Բիրադի զարմացել էին, թե ո՞րտեղից է ձեռք քցել թոռճու տղեն էս աղչիկն ու քառասուն դավա բեռ դոլվաթը։

Էնոնք հասան իրանց մուրազին։

---

[1] Վարվեր (Ս. Բ.)։